


443 =

23

ԿԱԿՈՒՄԱՊԵՐ

# ՅԵՐԵՎԱՆԻ



## ՅԵՐԵՎԱՆ-ԹԻՖԼԻՍ

ՅԵՐԵՎԱՆ - ՊԵՏՂՐԱՏ - 1930 թ.

896,542-93

20 04/3 2017

# Յ Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի Յ Ե Ր Ե Կ Ա Ն - Թ Ի Ֆ Լ Ի Ս

1.

Ո՛յ, ո՛յ, չգիտես,  
վոր գնում ենք  
տատիս տես.  
Յերևանից  
Էյ, Թիֆլիս:

Նամակ յեկավ  
մայրիկիս,  
թե՛ Լենիկիս  
հետդ բեր,  
սպասում ենք  
անհամբեր:



Ո՛յ, ո՛յ, լավ ե, լավ,  
սիրտս ծտից  
թև առավ.  
Ետդ եզուց  
մեծ լվացք,  
ուրբաթ շաբաթ  
կառք, գնացք,  
շողեշարժը  
հն՛ անի,

մեզ տատիկիս  
մոտ տանի:  
Մնաս բարով,  
Յերևան.  
կառքով գեպի  
կայարան,  
ժամանակին  
լավ հասանք.

ХНКО-АПЕР  
ПОЕЗД  
Эривань – Тифлис


ՄԱՍՏԱԿԱՆՅԱՆԻ  
ՀԱՍՏ  
11-294489

ՆԿ. Ա. ՄԱՍՏԱԿԱՆՅԱՆԻ



Ժամանակին  
և տոմսակ:  
Գնացքն յեկավ,  
ներս մտանք,  
հենց վոր լավեց  
յերկրորդ զանգ,  
շոգեշարժը  
զիլ սուլեց,  
ուելսերով  
զլորեց

Վագոնները  
լիքը մարդ-  
բայց բոլորից  
յես հպարտ-  
չե՛, գնում եմ  
ե՛յ, Թիֆլիս:  
Տատս ե գրել  
մայրիկիս,  
Թե՛ հետդ բեր  
լենիկիս:



3.

Ճամպան տվինք  
ու անցանք,  
Յերևանից  
հեռացանք.  
Վագոնները  
տանր-տանր-տանր...  
մեքենավարն  
անդադար  
հսկում ե, վոր  
չլինի

մեկը գծին  
վտաք դնի՛  
Թե յեղ, Թե կով,  
և Թե եշ  
գնացքի տակ  
դառնա լեշ:  
Մին ել ըհը՛,  
մի մեծ կով  
ճամպի միջին  
չորս վտաքով,


Խանգարում ե  
գնացքին,  
շոգեշարժի  
ընթացքին,  
կանգնել ե, մո՛ւ,  
բառաչում,  
գուցե հորթին  
իր կանչում:  
—Մեզ ճամպան տուր,  
անասուն,—  
շոգեշարժն ե  
զիլ ասում՝  
յերկինք տալով  
ծուխ ու մուխ.  
կովը տնկած  
պոչ, գլուխ,  
մին ել գծից  
դաշտ, հնճտ-հնճտ,  
ծիծաղ, ծիծաղ —  
մենք կնճտ-կնճտ:  
4.  
Ինչքան լավ եր  
և սիրուն

դաշտի ճամպան  
վորտուն:  
Փայտը ձեռին  
մի անցորդ-  
շնիկն իրեն  
առաջնորդ,  
տրմբտմբալեն  
գնում ե,  
վագոններին  
նայում ե.  
Վագոնները  
տանր-տանր-տանր,  
զրոգոում են  
անդադար:  
—Անցորդ, անցորդ,—  
յես ասի,—  
Թե կարող ես,  
մեզ հասի:  
—Շատ եմ ուզում,  
շատ ուզում,  
բայց գնացքն ե  
զիլ վզողում.  
դուք փախչում եք,



դուք թուղում  
վոնց թեւափոր  
մեծ թուղուն:  
5.


Անցանք հանդ ու  
անդաստան,



Են կոմունան  
նորաշեն,  
հին անուներ  
Լուկաշեն,


դաշտեր, տափ ու  
տափաստան.  
հսկա Մասիս,  
Արագած,  
սարեր յերկիրք  
բարձրացած:

մի նոր անուն  
ունի նա՛  
«Կարմիր բանակ»  
կոմունա:




Սարդարապատ—  
անապատ,  
հիմա շեն դաշտ  
ջրառատ:

Տանի, տանի,  
թող տանի,  
գնացքն հասավ  
և Անի:




Այնտեղ կիտած  
պեմզա կար,

սպունգի պես  
շեջոտ բար:




պեմզան, գիտե՛ս,  
 հանք ե, հանք,  
 լավ մաքրում ե  
 կեղտ ու ժանգ:  
 Ջոր ու ցամաք  
 ա՛յ, Աղին,  
 վո՛չ պոպոք կա,  
 վո՛չ կաղին:


Պիտի տեսնել,  
 հիանալ,  
 Լենինական,  
 Շիրկանալ:  
 Տեքստիլը՝  
 գործարան,  
 մեծ քաղաքի  
 շատ նման:



Ջաշոււոր ցուրտ,  
 շատ քամոտ,  
 տեղը բարձր,  
 սառը ող:




Մենք գնացքով  
 ներս մտանք  
 մեծ տոնելը,  
 գետնի տակ:




Ղա-րա-բի-լի-սան...  
բաղաբ ե սա, սա.  
ամառանոց  
շատ կայտառ.

շուրջը սարեր  
և անտառ.  
բաղ ու բոստան  
կանաչ, խոտ,



Ղուրն աղբյուրի,  
մաքուր ող.  
Տես, են ձորը,  
խնչ հարմար,  
կարմիր բանակ,  
բեզ ճամբար:




ճ.  
Գնացք, գնացք,  
զեհ զոռի,  
վագոններդ  
զլորի,  
Փամբակից տար

Մեզ Լոռի.  
Սարեր, ձորեր  
անտառի.  
Այ կամուրջը  
Շահալի:




հիսուն սաժեն,  
 ավելի.  
 մեկնվել է  
 ձորից-ձոր,  
 ո՞հ, ինչքան է  
 տակը խոր.

պան, պան, պան,  
 այն ճամպան...  
 մարդու սիրտ է  
 դողդողում,  
 բայց գնացրը  
 չի վախում.



նա փնջում է,  
 փրնջփնջում.  
 — Անցանք, անցանք, —  
 զիլ կանչում:  
 Քոլագերան  
 կայարան.  
 Զորագետը  
 զարմանք բան:  
 Փամբակ-Լոռուն  
 լույս կտա,

հողերին ել  
 բույս կտա:  
 Պատմում եյին  
 վագոնում  
 ու գնացրով  
 զիլ գնում:  
 Ալլահվերդին  
 սա յե, սա,  
 չե՞ս հարցնի՝  
 ինչ տեսա:




Զավոդ, գավոդ,  
 ծխնելույզ,  
 ծուխը բուլա,  
 բուլա դուրս.  
 բանվորական  
 մի աշխարհ,  
 աշխատում են  
 անդադար.  
 հանքից ձուլում  
 զուտ պղինձ.  
 եզ մայրիկս  
 պատմեց ինձ:

7.  
 Ի՞նչ սիրուն է,  
 ի՞նչ սիրուն  
 յերկաթգլիժը  
 գալարուն.  
 գնացք, նրան  
 դու ծալի.  
 տվիր անցար  
 Բորչալի.  
 Ի՞նչ կայարան,  
 մոտին գյուղ՝  
 Սանդար, Կումիս,  
 Նավթուղ.


ուրախ եյի,  
 շատ ուրախ,  
 աչքիս առաջ  
 դեպի ձախ,  
 Թիֆլիսն ահա,  
 մեծ քաղաք-

սարերի մեջ  
 ընդարձակ  
 դավողներից  
 ծուխ ու մուխ,  
 առափոտ եր  
 դեռ կանուխ,



իջանք Թիֆլիս  
 կա յարան:  
 Իջնողները,  
 վայ, ինչքան,  
 իրերն առած  
 գնացին,  
 ծիծաղելով  
 ասացին.  
 —Շնորհակալ ենք,  
 շոգեշարժ,

Վոր գնացրը  
 քաշեքաշ  
 բերի Թիֆլիս  
 հասցրիլը.  
 Հարհարեցինք,  
 մեզ ներիլը:  
 Կառք նստեցինք  
 ու գր'ո-գր'ո-  
 տատիկիս մոտ  
 կառքով թր'ո:



Լույս է ահանում Հ. Ս. Ն. Ժ. Կ. Սոցդատագլխովորչության կից գործող Սան-  
 կական Գրականության Հանձնաժողովի համանուն թյամբ ..



Գեանրատ №1315      Գրառեպվար №5202(բ)      Տիրաժ 5000  
 Վիմ. Հայպոլիգրաֆի պատ. № 2839



523 - 19

11

24446

"a h l e"  
504

